

ԱՇՈՏ ԱՐԻՎԱՍՅԱՆ ԼԵՉՎԱԲԱՆ – ՀԱՅԱԳԵՏԸ

Մանկավարժական համալսարանի տարեգրության մեջ առանձնանում է գիտնականների մի պատկառելի փաղանգ, որը լուսավոր հետք է թողել գիտության և կրթության ամենատարբեր բնագավառներում:

Բանասիրության բնագավառում իր առանձին տեղն ունի բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, գիտության վաստակավոր գործիչ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Աշոտ Արսենի Աբրահամյանը: Նա շուրջ քառորդ դար ղեկավարել է ինստիտուտի հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնը:

Այսօր նա իննսուն տարեկան է և շուրջ քառորդ դար է, որ մեզ հետ չէ: Ամենուրեք և ամեն պահի մենք զգում ենք նրա աներևույթ ներկայությունը, զգոնանում նրա խստապահանջ ու անաչառ հայացքի ներքո, ըստ այդմ կշռադատում մեր անելիքները:

Աբրահամյանը 1943 թվականին ավարտել է նույն ինստիտուտի լեզվագրական ֆակուլտետը, 1944–47 թթ. սովորել ինստիտուտի ասպիրանտուրայում, 1948 թ. պաշտպանել թեկնածուական, իսկ 1963թ. դոկտորական ատենախոսություն: 1950–59 թթ. միաժամանակ պաշտոնավարել է ՀՍՄՀ ԳԱ լեզվի ինստիտուտում: Մանկավարժական ինստիտուտում դասավանդել է ժամանակակից հայոց լեզու, գրաբարի, լեզվաբանության ներածության բուհական առարկաները:

Լայն են Ա. Աբրահամյանի գիտահետազոտական հետաքրքրությունների շրջանակները. նա ուշագրավ ներդրում ունի հայերենի, մասնավորապես արդի գրական լեզվի բայականության, բայական կարգերի ձևաբանական հատկանիշների բնության, գրաբարի ուսումնասիրության, հայերենի պատմական հնչյունաբանության, բառաբանության բնագավառում: Նա անգնահատելի ծառայություններ ունի հայ պատմիչների երկերի աշխարհաբար թարգմանության բնագավառում:

Գիտական աշխարհում երևույթ են անվանի լեզվաբանի «Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը» (Ե., 1953), «Բայը ժամանակակից հայերենում» (Ե., 1962) աշխատությունները: Առաջին աշխատությանը նա լեզվական այդ իրողությունը քննում է տարածամասկյա հայեցակետով՝ այն ներկայացնելով հայերենի բոլոր դրսևորումների (գրաբար, միջին հայերեն, աշխարհաբար, բարբառներ) մեջ:

Երկրորդ աշխատությունն ընդգրկում է ժամանակակից արևելահայ գրական լեզվի բայի խոսքիմասային բնույթին, բառաքերականական կազմության

նը և սեռի կարգին վերաբերող հարցեր: Հեղինակն այստեղ առավելապես կարևորում է լեզվական իրողությունների համաժամանակյա վիճակը:

1952թ. լույս տեսավ «Գրաբարի ծեռնարկը»՝ բուհերի ուսանողների համար, այն պարունակում է գրաբարի հնչյունաբանությունը, ձևաբանությունը և հատընտիր հատվածներ, որոնց ծանոթագրություններում արծարծված են նաև շարահյուսության հարցերը: Այս ծեռնարկը բարձր է գնահատվել անվանի լեզվաբանների կողմից, որոնք այն առանց վարանելու դասել են այնպիսի դասական աշխատությունների կողքին, ինչպիսին է Չալքիսյան-Այտընյանի քերականությունը (եղ. Աղայան):

Հայագիտության համար կարևոր ներդրում են Ա. Աբրահամյանի՝ գրաբարի բնագրերից կատարած թարգմանությունները՝ Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոց» (Երևան, 1970 թ.), ընդարձակ ներծույթամբ և գիտական բարձրարժեք ծանոթագրություններով:

Ա. Աբրահամյանն առանձին հոդվածներով անդրադարձել է հայերենի հնչյունափոխության, փոխառությունների, ստուգաբանությունների, նախադասության անդամների և խոսքի մասերի հարաբերակցության, վերլուծականության, քերականական համանունության և բազմաբնույթ այլ հարցերի:

Կիրառելով բառերի հավանականության, արմատական նշանակության համապատասխանության և հնչյունական օրենքների սկզբունքները՝ նա ստուգաբանել է **աճուկ, արատ, արգատ, մանուշակ, մսխել, կատակ, բերան, դալում, նամուս** բառերը (Տես «Բառաբանական դիտողություններ», ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», Երևան, 1958, N 5, «Բառաբանական դիտողություններ», «Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, 1987, N 9):

Պրոֆ. Ա. Աբրահամյանն ուշագրավ հետազոտություն ունի՝ նվիրված արդի հայերենի տարբեր մակարդակներում առկա վերլուծականության դրսևորումներին: Առաջին անգամ վերլուծականությունը դիտարկվում է բառային, ձևաբանական և շարահյուսական մակարդակներում: Նկատում է, որ կազմության կամ արտասանության բնույթով վերլուծական կարող են լինել այս մակարդակների միավորները՝ բառույթները, բառածները, ինչպես և նախադասության այնպիսի անդամներ, որոնք «նյութապես» լիովին չեն համընկնում բառույթներին ու բառածներին (Տես Պատմաբանասիրական համադես, 1972, N 3):

Ա. Աբրահամյանն զբաղվել է նաև հայերենի պատմական հնչյունափոխության որոշ երևույթների ժամանակագրության հարցերով և փորձել է որոշել դրանց ձևավորման մոտավոր ժամանակաշրջանը («Տես Փաստեր հայերենի պատմական հնչյունափոխության մի քանի երևույթների ժամանակաշրջանի վերաբերյալ», ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», 1957, N 4) և այլն:

Հայերենի լեզվաքերականական բազմաթիվ հարցադրումներ իրենց սպառնիչ ու ամբողջական լուծումն են ստացել Ա. Աբրահամյանի արժեքավոր մեծագրություններում, գիտական տարաբնույթ հոդվածներում:

Ստամբուլում գործի վերաբերյալ պատասխանատվության բարձր գիտակցում, ուսումնական աշխատանքի նկատմամբ լրջագույն մտահոգություն, գիտական կադրեր պատրաստելու հարցում սթափ կեցվածք ու մտահոգություն, ամբիոնի մեծերի և փոքրերի հանդեպ իբրև հավասար, միաժամանակ,

առաջինը հավասարների մեջ,— այսպիսին էր ամբիոնի վարիչ Աշոտ Աբրահամյանը:

Գիտության պաշտամունք ու ակնածանք, գիտական մտքի անկորագիծ թռիչք, գիտական մտքի շտեմարան ու զինանոց, դասախոսելու հռետորական ձիրք, ուսանողների կուռք ու պաշտամունք,— այսպիսին էր գիտնական ու դասախոս Աշոտ Աբրահամյանը:

Հայրենի եզերքների անսահման սիրով լցված, հայոց պատմությունը պաշտամունք դարձրած, հայոց հնամենի բերդերին ու վանքերին սիրահարված, վերածնվող Հայաստանով հպարտացած,— այսպիսին էր մարդ ու քաղաքացի Աշոտ Աբրահամյանը...

ԼՆԼԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ